



18. ՆՈՒՆՀԱՏԻ ՀԵՔԻԱԹ

Կէղնի, շէղնի թագավոր մե կէղնի, ուր մեռնելուց յառեջ կը կանչե ուր իրեք տղեկներ, կըսե.

— Ընձնե ձրդի օսչաթ՝ հար յուր օր կէրթաք նեճիրի, իգա դիմացի սար շէրթաք, վնաս կը քաշիք,— կըսե ու կը մեռնի:

Գընցնա ժուկ ու ժամանակ մե, մեծ տղեն կըսե.

— Ձա՛նըմ, ի՛նչ կէղնի, օր ես էրթամ իդա սար, տեսնամ ի՛նչ կա, ի՛նչ չկա:

Կէրթա, կէրթա՛ կը տեսնա հանդե սարի գլուխ քոշկ ու սարա կա, դեմ կէնե կէրթա, օր կը մոտենա՛ կը տեսնա հավք մե կը թռնա գիջնա վըր ուր գլխուն, թևերուն, պառեկին, կը մտնա դռնով ներս, մեկէլ կը տեսնա հավք դառձավ էղավ դև, կանավ յառջև:

— Բարով, հազար բարով էկար, համեցի էրթանք ներս, գինամ ճամփորդ իս, նեղեցեր իս, նստի, ըռհաթի, կտոր մե հաց կի, սորա աստված գըու բան յաջողէ, յուր կէրթաս՝ գնա,— կըսե դև:

Օր կը մոտենա նարդիվնին՝ դև կըսե.

— Դու յընգի յառեջ:

Տղեն կըսե.

— Դո՛ւ յընգի:

Դև կըսե.

— Մըգի ադաթ չկա յընգնանք յառեջ, դու յընկի առջևսի:

Տղեն գընկնա չառեջ, դև քետեանց կը զարկե ղտղեն կըստանե.
ղմիս շուտե, կը թալե հորու մեջ:

Մեծ ախպեր օր կը չանդընա, միջնեկ ախպեր կէրթա, էլ ինչ
չերկընցունք, դև էն օղյաթ կը հանե ընդրա գլուխ, ինչ օր հանեք
էր մեծ ախպոր գլուխ:

Պզտիկ ախպերն ու քուր կըսին.

— Մեր ախպրտիք գացին կորան, չեյնանք էրթանք հաւ ք.
տեսնանք՝ մեռան, ապրան, ի՛նչ էղան:

Կէրթան, կէրթան՝ կը տեսնան հավք մե՛ թռավ, կավ, նլավ
վըր տղի գլխուն, թեկոն, պառնկին. հասան քոշկի դուռ, մտան
ներս, դառնավ էղավ դև, կանտվ չառջև ուրանց:

Դև ըսեց տղին.

— Յընդի առջևսի, չեյնանք վերև:

Տղեն ըսեց.

— Չէ, դո՛ւ չընդի:

— Չէ, դո՛ւ չընգի:

Հա՛ շէ, հա՛ շէ, դևն չընգավ չառեջ, տղեն ղարկեց զդևն սպա-
նեց, զջանդակն էրեց կտոր-կտոր, տարավ թալեց հորու մեջ: Ախ-
պերն ու քուր տեսան օր էդ տեղ քընց ուրանց աղեկ է, մալ ու դոլ-
վաթ անհեսար ու անքթար է, մանցին էդ տեղ: Տղեն կէրթեր սարեր
նե՛նըրվանութեն կէներ, աղջիկ կը մներ տուն, հաց ու զադ կը պատ-
րաստեր, տախտ կավլեր, տան մուխիաթ կը մներ: Ախպեր քոջ առա-
ջուց թանքի էրեր էր, թե տախտն օր կավլիս՝ ժեխ շէղնի, շէղնի թա-
փիս մըջ հորուն, հմա թափեցիր՝ դև կը սաղնա: Աղջիկ օր մն զտախտ
կավլե, ղժեխ կը թափե մըջ հորուն, հըտ թափելուն՝ դև կը սաղնա,
գեյնա դուս, զաղջիկ կը զավթե, կէնե ուրին կնիկ, կը հարցու աղջը-
կաց.

— Քու ախպերն չո՛ւր է:

Աղջիկ կըսե.

— Գացեր է սարեր նեճիր կէնե:

— Աքու ախպեր պտի սպանիմ, — կըսե դև:

— Չէ՛, — կըսե աղջիկ, — ինչի՞ կըսպանիս, հազըր կէրթա մը-
զի նեճիր կէնե, կը բերե կուտինք:

Յիրկուն ախպեր գիկա, կը տեսնա՝ օր ի՛նչ, դև սաղցեր է, ինքն
ուր քուր թե-թեի տված նստուկ ին, ուրանց խոջ ու բեշ կէնին:

Աղջիկ կը ծոցվորի, մտափոխ կէղնի, նուռ գուգե: Ախպեր կէր-
թա նուռ կը բերե, կուտե, ին ամիս օր կը թըմի՝ տղե մե կը բերե,
էդ տղի կշտին մսե խանջալ մե կէղնի կպուկ, վրեն լե նուան հատ
մե, ըշտե տղի անուն կը գնին նուանհատ:

Իւրլլի Լրեխեք թե տարով կը մեծնեն, Նոանհատ ամսով կը մեծնեն, շրմբի դեի տղա էր, դեեր զոնկ-զոնկ կը մեծնան: Օր մե դէն աղջկան կըսե.

— Իմ աչք չը վերու օր քու ախպեր սաղ մնա, ես կէղնիմ օձ, կը քաշվիմ դոան դրնդեն, ախպերդ օր գիկա՝ զպուճուճակ կը խեթիմ, մեոցում:

Նոանհատ դիմնա: Յիրկուն օր քեռին գիկա, կը վազե յառջե, կըսե.

— Քեռի ջան, քեռի, ընծի էրե շուշլավգիկ, առ քու շալակ, տար դիսի ներս:

Վեռին ո՛նոանհատ կը դնե վըր ուր վզին, տղեն կը գարի վըր քեռու պուճուճկին, դոնով գընցնա ներս, օձ էլ չը կոնա գքեռին խեթե: Օլոր օր դե կըսե.

— Կէղնիմ օձ, քաշվիմ դոան շեմբի տակ, օր քու ախպեր դա յընցնի՝ կը խեթիմ զկրունկ, օր մեռնի:

Նոանհատ դիմնա զուր պապու-մամու խորուրդք՝ չիրկուն օր քեռին գիկա, կը վաղե յառեջ, կըսե.

— Քեռի ջան, չերեկ դու գիս շալկիր, յըսօր լե ես քըզի պտի շալկիմ:

Կը շալկե գքեռին, դոնով ներս կը տանե, օձ չը կոնա խեթե: Վրա իրեքին դե կըսե ուր կնկան.

— Հանդե ես կէղնիմ հավք, դելնամ թառիմ վըր ծառին, քու ախպեր օր գա՝ կիտաս դիսի սպանել, իմ միսն ու օսկոռ մեկ դեն կը ջոկիս, թալիս հոր, իմ ճրագուով գաթա կը շինիս, կիտաս քու ախպոր, օր ուտե մեռնի: Սորա ժեխ կը թափիս մըջ հորուն, վըր իմ օսկոռներուն՝ հանդե ես կը սաղնամ, գելնամ հըտ չիրարու մինակ կապրինք:

Նոանհատ դիմնա ուր պապու-մամու խորուրդք: Էդ օր լե քեռու ձեռք նեծիր շընկնա, դարտակ գիկա տուն:

Քուր կըսե.

— Ախպեր, քու փեսեն տուն չէ, դու լե դարտակ իս էկի, բան չկա կերակուլ էփիմ, չելի ինա ծառի վրեն, տես հավք մե կա, զարկ, սպանե, մոռթե, յըսօր լե ընդրնով յուլա էրթանք:

Ախպեր գհավք կը զարկե, սպանե: Քուր գհավքու միսն ու օսկոռներ կը ջոկե թալե մըջ հորուն, ճրագուով գաթա կը շինե, ուրին ու Նոանհատին լե արդար էղով գաթա կէփե, օր նստին վըր սուֆըրին, հաց ուտին: Նոանհատ կըսե.

— Սա՛մո, մա՛մո, հլա իշկե յառիք, տե՛ս մո՛ւկ, մո՛ւկ:

Մամն օր կիշկե վերև, տղեն զքեռու յառջևի գաթեն կը դնե ուր յառջև, հմա շուտե: Քեռին օր դիկա՝ յըմեն բան կըսե, դևից ու կընկաց կազատվին, դելնան դընկնան ճամպա: Շատ կէրթան, քիշ կէրթան՝ քեռին կը նեղենա, կը նստի ծառի մե հով, քեռին կըսե.

— Օ՛ք, իմալ խայլոն մե դուր գիկա, օր քաշիմ, ափսո՛ս օր կրակ չկա:

Նուանհատ կիշկե, օր դեմի սարի կող բարակ մուխ մե դելնա:

— Քեռի՛,— կըսե,— դու զգլուխդի դի, փշումե ըոհաթի, ես էրթամ կրակ բերիմ քըզի:

Նուանհատ կէրթա տեսնա՝ քառսուն դև, յոթկանթ պղինձ մե դրած ին վըր կրակին, միսն ի մեջ կէռա, կը քլքլա: Բարև կիտա. բարև կառնե, կըսե.

— Արեք զիդա պղինձ քաշեք մեկ դեն, ես կրակ պտի տանիմ իմ քեռուն, օր խայլոն քաշե:

Դևեր կըսին.

— Մենք չընք կոնա զպղինձ վերու, օր դու կոնաս՝ վերու դիր մեկ դեն, կրակ տար:

Նուանհատ կը վերու, կը թալե մեկ դեն, միս չըմեն կը թափի: Դևեր կը հեռոտին, կառնին զուրանց գուրգեր ու գիկան նուանհատի բոլոր: Նուանհատ զուր թևեր կը քշտե, գընկնա մըջ ուրանց, զքառսուն դև լե կըսպանե, դևերու մեծավորի կնիկ լե կառնե, կրակ կը վերու, գիկա հասնի քեռուն: Քեռին խայլոն կը քաշե, գելնան դընկնան ճամպա: Շատ կէրթան, քիշ կէրթան՝ կը հասնին քաղաք մե, քաղքի յեզր գիջնան տուն մե, կէդնին խոնախ էդ տանտիրոջ, կը տեսնան օր տանտեր դուրբին մե դրեր է վըր աչքերուն, աստդեր կիշկե: Նուանհատ կը հարցու.

— Հորոխպեր, էդ ի՞նչ է հմալ կիշկիս:

— Ծս աստղաբախշ իմ, աստղեր կիշկիմ, տեսնամ ո՛ր կը մեռնի, ո՛ր կապրի, ո՛ր տղա յան աղջիկ ո՛ր մե աստղի տակ կը ծնի, ո՛ր իղբլով կէղնի, ո՛ր անիղբալ, ո՛ր զանգին կէղնի, ո՛ր աղքատ:

— Օր հմալ է,— կըսե նուանհատ,— ա՛ն քըզի ճանկ մե օսկի, ինչ գախ օր ես նեղն չընգնիմ՝ ընձի օգնութեն էնիս:

Քեռին, քեռեկին ու նուանհատ գընկնան ճամպա ու կէրթան: Ծամպին կը հանպտին թոռչու մե, ձուկ բռնողի մե, կը տեսնան, օր էդ մարդ խորոտիկ ձուկ մե բռնեք է, դրեր մըջ ջրով լիք ամնի մե, ու սեր կէնե:

— Հորոխպե՛ր, էդ ի՞նչ է կէնիս,— կը հարցու նուանհատ:

— Ախպըրտի՛ք,— կըսե թոռչին,— իգա քսան տարի թոռչու-
թեն կէնիս, հմլա խորոտիկ ձուկ իմ թոռ չընգեր է, չըմ խիմիշի
էփիմ ուտիմ, լան ծախիմ, հմլա դիլ ու մայիլ էղեր իմ, թոռեր իմ
դիմ րան ու գործ՝ թամաշա կէնիմ:

Նոանհատ էրկու ճանկ օսկի կիտա թոռչուն, կըսե.

— Էդ ձուկ նա՛ կսպանիս, նա՛ էլ կը ծախիս, հմլա մըջ չըին
սող կը պահիս, ինչ դախ օր ուրին-ուրին մեռավ՝ յիմցի օր նեղն
իմ, դիկաս ընծի օղնութեն կէնիս:

Քեռին, քեռեկին ու Նոանհատ կէրթան, կէրթան՝ կը հասնին
քեռու հոր քաղաք, կը տեսնան օր չըմեն րան փոխվեր է, քեռու հոխ-
այեր էղեր է թագավոր: Քեռու միտք գընկնան ուր հեր ու մեր, ուր
ախպըրտիք, կը դիժարանա:

Նոանհատ քանի մե հեղ օր կէրթա թագավորի տուն ու դիկա՝
թագավորի կնկա աչք կընկնա Նոանհատ: Թագավոր զէդ բան եր
կոահե, կանչել կիտա ջադուքար պառավ մե, կըսե.

— Իգա խըդար փարա քըզի կիտամ, օր զՆոանհատին ախշըր-
թեն վերցուս՝ սպանիս:

Պառավ ըղունգ. կիշկե, դիմնա, օր Նոանհատ կողերու վրեն մսե
խանջալ կա, օր խանջալ քաշին հանին, Նոանհատ կը մեռնի: Պա-
ռավ կէրթա քեռու տուն, գիկա, քեռեկնկան ճանչվորութեն կիտա,
կէղնի տան կնիկ: Օրերուց օր մե կը տեսնա Նոանհատ շոգու զհալավ
հաներ է, պարկեր է, կը մտնա ներս ու զմսե խանջալ կը քաշե կո-
ղեն կը հանե, Նոանհատ կը մեռնի:

Աստղաբախշ կիշկե, օր Նոանհատի աստղ խավրեր է, գելնա
չընդնա ճամպա, ոսստ գիկա թոռչուն: Թոռչին կը հարցու.

— Աստղաբախշ, հմլա աշալա յո՞ւր կէրթաս:

Աստղաբախշ կըսե.

— Նոանհատի աստղ խավրեր է, էրթամ տեսնիմ ի՞նչ էղավ:
Թոռչին լե կիշկե, օր Նոանհատի ձուկ մըջ ամնին փիցեր է, զչո-
քեր կը տփե, կըսե.

— Հե՛: վա՛խ, վոլա, օղորդ է, Նոանհատ մեռեր է:

Աստղաբախշն ու թոռչին վոազով կէրթան կը հասնին թագա-
վորի քաղաք, կը հարցուն զքեռու տուն, կը գտնան, ներս կը մտնան
տեսնան, օր օղորդման՝ Նոանհատ էղեր է շոր փետ: Աստղաբախշ
զդուրբին կը դնե ալիչ, կիշկե, կըսե.

— Թոռչի՛, Նոանհատի աստղեն ինչ-օր կտոր մե փրցուկ է, օր
գա մեկնի (միանա)՝ կըսաղնա:

Թողչին կիշկե տեսնա, օր մսե խանջալ թալուկ է ճըտ կշտին.
Հմա կը հասնի զխանջալ կը վերու զարկե ուր տեղ. օր կը զարկե՝
Նոանհատ սըփ-սաղ գելնա նստի: Թագավորի կնիկ կառնե ունան-
հատ, զուր մարդ թախտեն կը թալե ցած, կէնե ուրին վազիր. Նոան-
հատն ու թագավորի կնիկ կը նստին վըր թախտին, դէրկիր կը կա-
ռավարին: Ընդոք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձեր
մուրազին:

